

ԱԿԱԳԵՄԻՈՍ ԻՎ. ԶԱՎԱԽԻՇՎԻԼԻՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ¹

(Մահվան 20-ամյակի առթիվ)

Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵԹ-ՐԵԿ

(Թրիփսի)

Վրաց ժողովրդի զավակները ցարիզմի օրոք հնարավորություն չունեին տեղում բարձրագույն կրթություն ստանալու: Ուսումնածարավ երիտասարդները սովորաբար մեկնում էին Ռուսաստանի զանազան քաղաքները (Պետերբուրգ, Մոսկվա, Կիև, Օդեսա, Խարկով, Կադան և այլն): Նրանցից շատերը, «Թերեբի ջուր խմածները» (Թերեզալեուլի), վերադառնում էին հայրենիք, իսկ մյուսները, մնալով Ռուսաստանում, աշխատում էին այնտեղ գիտություն այլև-այլ ասպարեզներում: Ահա այս վերջինների թվին էր պատկանում նաև հանգուցյալ ակադեմիկոս Իվ. Զավախիշվիլին (1876—1940), խոշորագույն վրացագետ-պատմաբանը, միաժամանակ և հայագետը:

Իվ. Զավախիշվիլին Հայաստանի Մատենադարանի, ինչպես և Պատմության, Լեզվի ու Գրականության ինստիտուտի գիտական խորհուրդների առաջին կազմի անդամ էր, թեև հիվանդության պատճառով հնարավորություն չունեցավ մասնակցելու հիշյալ խորհուրդների աշխատանքներին, և այնպես էլ մահացավ՝ շտեմսելով ո՛չ հին և ո՛չ էլ նոր Երևանը:

Իվ. Զավախիշվիլու թողած գրական ժառանգության մեջ նշանակալից տեղ են գրավում հայագիտական գործերը, որոնցից մի մասն է միայն տպված ուսերեն, իսկ մի շնչին մասը. մեր թարգմանությամբ, հայերեն: Մինչդեռ նրա աշխատությունների զգալի մասը մնում է միմիայն վրացերեն, ուստի և անմտաչելի՝ հայ ընթերցողների լայն խավերի համար:

Սույն հոդվածի հիմնական նպատակն է ծանոթացնել հայ հասարակությանը հանգուցյալ մեծ գիտնականի և անկեղծ հայասերի ստեղծագործության հետ՝ մի առ մի ընդգծելով նրա երախտիր հայագիտության բնագավառում:



Իվ. Զավախիշվիլին ծնվել է Թրիփսիում 1876 թվականին՝ նրա հայրը՝ Աբեքսանդր Զավախիշվիլին՝ ժամանակի առաջավոր գործիչներից էր: Միջնակարգ կրթությունը Իվանը ստացավ Թրիփսիի արական I դիմնադիպում, իսկ բարձրագույնը՝ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում, որը նա ավարտեց 1899 թ.:

Համալսարանում Իվ. Զավախիշվիլին աշակերտեց ակադեմիկոս-պրոֆեսորներ Ռոզենին, Ժուկովսկուն, Կոկովցեին, Յագարելուն, Մեդնիկովին, Մառին, Բարտուլդին և ուրիշներին:

Պրոֆեսորական կոչման պատրաստվելու համար հայ-վրացական ֆիլոլոգիայի ամբիոնի գծով մնալով համալսարանում՝ Իվ. Զավախիշվիլին մագիստրական բանավոր քննությունները հանձնելու իր փորձնական դասախոսության նյութը ընտրեց հայոց պատմագրությունից՝ «Մի էջ գյուղացիական շարժման պատմությունից հին Հայաստանում» թեմայով: 1902 թ. նա ընտրվեց համալսարանի պրիվատ-դոցենտ և այս պաշտոնում մնաց մինչև 1917 թ.: Փետրվարյան ռևոլյուցիայից հետո տեղափոխվեց Թրիփսի, ուր նա ընտրվեց տեղի համալսարանի պրոֆեսոր և իմաստասերական ֆակուլտետի ղեկան, իսկ հետագայում աշխատեց իբրև համալսարանի ռեկտոր:

¹ Սույն հոդվածի վրացերեն թարգմանությունը, նախքան նրա բնագրի հրապարակումը, լույս է տեսել Վրացական ՍՍԻ Գիտ. ակադեմիայի ակադ. Իվ. Զավախիշվիլու անվան Պատմության ինստիտուտի «Աշխատություններ» III հատորում (Թրիփսի, 1958, էջ 267—288):

Իր գրական-գիտական գործունեության առաջին շրջանում, որը ընթացավ 1899-ից մինչև 1917 թվականներին Պետերբուրգում, Իվ. Զավախիշվիլին իր աշխատությունները հրապարակ էր հանում թե վրացերեն և թե ռուսերեն լեզուներով՝ վրացերենը տպագրելով Թիբլիսիի պարբերականներում կամ առանձին գրքերով մասնավոր հրատարակությամբ, իսկ ռուսերենը՝ Պետերբուրգի պարբերականներում և նույնպես առանձին գրքերով¹։



Հայագիտական ընույթի էր Իվ. Զավախիշվիլու ոչ միայն փորձնական դասախոսության թեման՝ վերջրած Հայաստանի գյուղացիական շարժումների պատմությունից, որը կարդացվեց պրիվատ-դոցենտի կոչում ստանալուց առաջ, 1902 թ., այլև, կիսով չափ, նրա մագիստրական դիսերտացիան «Государственный строй древней Грузии и древней Армении», որը լույս տեսավ «Тексты и разыскания по армяно-грузинской филологии» սերիայում (кн. VIII, СПб, 1905)։

Իվ. Զավախիշվիլու դասընթացները Պետերբուրգի համալսարանում 1902—1917 թթ. ընդգրկում էին ոչ միայն Վրաստանի, այլև Հայաստանի անցյալին վերաբերող նյութեր, այդպիսին էր, օրինակ, «Անիի քաղաքային կազմակերպությունն ըստ արձանագրությունների» դասընթացը, որը համառոտ ձևով «Անիի պատմություն» էր կոչվում²։

Այդ կապակցությամբ 1911 թ. ամռանը Իվ. Զավախիշվիլին այցելեց Անին, որի պեղումներին, Ն. Մառի ղեկավարությամբ, մասնակցում էին Ա. Մ. Վրուչյրը, Ն. Պ. Սիչովը, Ն. Լ. Օկունիկը, Ս. Ն. Պոտորացկին և Գ. Ա. Ղափանցյանը (տե՛ս լուսանկարը)։ Եվ սա միակ դեպքն էր, որ Իվ. Զավախիշվիլին այցելեց Հայաստանը։

Թիբլիսիի համալսարանում Իվ. Զավախիշվիլին 1921—1922 ուսումնական տարում, որպես մասնագիտական դասընթաց, կարդաց «Հին հայոց պատմական դրականությունը» առարկան, սակայն միմիայն V—VI դդ. սահմաններում։ Այդ դասընթացը առանձին գրքով, վրացերեն լեզվով, լույս տեսավ Թիբլիսիում 1935 թ.։

Լինելով ականավոր վրացագետ և հայագետ, Իվ. Զավախիշվիլին, իրրև պաշտոնական ունեցնեղենտ-ընդդիմախոս և ոչ-պաշտոնական ընդդիմախոս, մասնակցել է մի շարք մագիստրական և դոկտորական դիսերտացիաների պաշտպանության՝ հայագիտական թեմաներով՝ նախ Պետերբուրգի և ապա Թիբլիսիի համալսարաններում³։

¹ Իվ. Զավախիշվիլու այս շրջանի ռուսերեն աշխատությունները հրատարակված են հետևյալ պարբերականներում. «Записки Восточного отделения Русского археологического общества» (1899, 1902), «Журнал Министерства народного просвещения» (1901, 1904, 1908), «Византийский временник» (1904), «Известия Академии наук» (1908, 1917), «Христианский Восток» (1912—1914), նաև հանրագիտարաններում՝ «Политическая энциклопедия» (1917), «Энциклопедический словарь Граната» (1913), վերջապես և 3 անուն առանձին գիրք և գրքույկ, սրանց թվում և մագիստրական դիսերտացիան։

² Обзорение преподавания наук по факультету восточных языков И. С.-Петербургского университета в осеннем полугодии 1910 года и в весеннем полугодии 1911 года, С.-Петербург, 1910.

³ Իվ. Զավախիշվիլին ընդդիմախոս է եղել.

1) Պետերբուրգի համալսարանում. ա. Մեսրոպ վ. Տեր-Մովսիսյանի «История перевода Библии на армянский язык» (СПб. 1902), ր. Գրիգոր Խալաթյանի «Армянские Аршакиды в Истории Армении Монсея Хоренского» (Москва, 1903), գ. Ն. Ադոնցի «Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя» (СПб, 1908). որոնցից առաջինը և երրորդը մագիստրական էին, իսկ երկրորդը՝ դոկտորական։

2) Թիբլիսիի համալսարանում. ա. տոգերիս գրողի «Վարդապետը հայոց հյուսիսային կողմանց» (վրացերեն, Թիբլիսի, 1928), իրրև պաշտոնական ունեցնեղենտ, և Բ. Արարատ Ղարիբյանի «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» (Երևան, 1939), իրրև ոչ-պաշտոնական ընդդիմախոս։

Ա. Ղարիբյանի դիսերտացիայի քննարկման ժամանակ 1940 թ. Իվ. Զավախիշվիլին ցանկություն հայտնեց, որ բարբառագիտական ուսումնասիրությունների միջոցին հաշվի առնվեն ձեռագրական հիշատակարանները և վիմական արձանագրությունները ևս, որով այնքան հաբուատ է հայ իրականությունը։



1911 թ. Անիում: Վերև կանգնած են՝ Ա. Մ. Վրույրը, Ն. Պ. Սիշովը, Ն. Լ. Օկուներ,
Ա. Ն. Պոլսոստացկին, Գ. Ա. Ղափանցյանը, ներքև նստած են՝ Ն. Յա. Մառը,
Ա. Ա. Մառը. (ժուլկովսկայան), Ի. Ա. Զավախիշվիլին, Վուրդյա Ն. Մառը:

Իվ. Զավախիշվիլին միշտ իր սրտին մոտ և սիրելի էր համարում հայ մշակույթը: 1939 թ. Համամիութենական Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ (ակադեմիկոս) րնտրվելու կապակցությամբ Արմֆանի նախագահության և կոլեկտիվի ողջույնի հեռագրին նա արձագանքեց հետևյալ պատասխան-հեռագրով.

«Արմֆանի նախագահությանը և ամբողջ կոլեկտիվին հայտնում եմ իմ խորը շնորհակալությունը՝ սրտագին շնորհավորանքի և բարի ցանկությունների համար: Արմֆանին ցանկանում եմ փայլուն հաջողություններ հետազոտական աշխատանքներում ինձ հարազատ հայ կուլտուրայի պատմության ուղղությամբ՝ ի բարօրություն և ծաղկումն հղբայրական մեր ժողովուրդների և մեր սոցիալիստական Հայրենիքի»:



Իվ. Զավախիշվիլու հայագետ լինելը զգացվում է նրա գրեթե բոլոր գործերում, որոնք հիմնականում պատում են Վրաստանի պատմության և օժանդակ կամ սպասարկու առարկաների շուրջը. դրանք են . 1. «Վրաստանի պատմությունը» I—V, 2. «Վրաց իրավունքի պատմությունը» I—II (3 գիրք), 3. «Վրաստանի տնտեսական պատմությունը», I—II, 4. «Վրացական հնագրությունը», 5. «Վրացական դիպլոմատիկան», 6. «Վրացական դրամագիտությունը», 7. «Վրացական երաժշտության պատմության հիմնական հարցերը», 8. «Նրա վրացական պատմական գրականությունը (V—XVIII դդ.)», 9. «Նյութեր վրաց ազգի նյութական կուլտուրայի պատմությանից», 10. «Վրաց ժողովրդի պատմության ներածությունը» և այլն: Սրանց մեծ մասը ունեցել է մի քանի հրատարակություն:

Այս բոլոր գործերում Իվ. Զավախիշվիլին հանդես է գալիս իրրե մասնագետ-գիտակ աժրող հայ պատմագրության՝ սկսած V դարից մինչև XIX դարը, ապա և համապատասխան գի-

¹ Իվ. Զավախիշվիլու աշխատությունների մանրամասն տեսությունը տե՛ս մեր «Ակադ. Իվ. Զավախիշվիլին և նրա գործերը» (մամանակագրական բիբլիոգրաֆիա), «Բիբլիոգրաֆիայի տեղեկագիր», I, Թբիլիսի, 1940, էջ 99—108 (վրացերեն):

տական գրականության, այդ թվում՝ և՛ բարբառների, և՛ տեղեկատու բնույթի հրատարակությունների, որոնց օժանդակությամբ պարզում է բազմաթիվ տնտեսական, իրավաբանական, երաժշտական, աշվեստագիտական և այլն տերմիններ, հայերենը համեմատելով իրեն մատչելի բոլոր լեզուների տվյալների հետ: 1912 թ. «Христианский Восток» ժուռնալում (том 1, вып. 3) նա հրատարակում է Ատենի Սիոնի VII դ. հայերեն արձանագրությունը, որի բովանդակությունն է. «Ես, Բողոս [աղ], շինող սրբոյ Եկեղեցւոյ...»¹:

Այս կարգի պրպտումներից առանձնապես աչքի է ընկնում հողագործության և մասնավորապես խաղողագործության տերմինների տեսությունը, որը տրված է Վրաստանի տնտեսական պատմության II գրքում (1934)²՝ նույնպես հայերենը համեմատությամբ թուրքերենի հետ: Քննված են նաև այլ բնագավառների տերմինները:



Հայագիտական առաջին գործը, որով Իվ. Զավախշվիլին հանդես եկավ գիտական աշխարհում, նրա մագիստրական գիտերտագիան էր. «Государственный строй древней Грузии и древней Армении», I (СПб, 1905, 148 էջ): Այս աշխատության առաջին մասը նվիրված է Վրաստանին (էջ 3—74), իսկ երկրորդը՝ Հայաստանին (էջ 77—136):

Հայաստանի, ինչպես և Վրաստանի պետական կառուցվածքի մասին խոսելիս, հեղինակը Ելակետ ունի XIX դ. վերջին և XX դ. սկզբների բուրժուական գիտության մեջ տիրապետող սխեման, որով պետությունը գիտվում էր իբրև ժողովուրդ (ա. հատկանիշ), որը զբաղված ունի որոշ տերիտորիա (բ. հատկանիշ) և միավորված է մի գերիշխանության ներքո (գ. հատկանիշ): Հետևապես պետությունը ճանաչվում է իբրև ապագասակարգային կազմակերպություն, ասել է՝ իբրև բնակչության դասակարգային գիֆերենցիացիայից և դասակարգային փոխհարաբերություններից զուրս գոյություն ունեցող կազմակերպություն: Ավելին, Ելակետ ունենալով, մի կողմից այն, որ գյուղը, քաղաքը, գավառը, նահանգը, պետությունը հնում կոչվում էին «տուն» (հայերեն), «սախի» (վրացերեն), «բէթ» (ասորերեն) «բեյթ» և «գար» (արաբերեն, և, մյուս կողմից, այն, որ գյուղի, քաղաքի, գավառի, նահանգի և պետության գլխավոր նույնպես հնում կոչվում էր «տանուտէր» (հայերեն), «մամասախիսի» (վրացերեն), «բեթուդա» (պարսկերեն), հեղինակը գալիս է այն թյուր եզրակացության, որ իբր թե պետությունը Հայաստանում և Վրաստանում գոյություն է ունեցել դեռևս տոհմային հասարակարգի գոյության պահին:

Իվ. Զավախշվիլու այս աշխատությունը՝ մարքսիստական շլիճելով հանդերձ՝ այնուամենայնիվ իր ժամանակին որոշ դեր խաղաց շնորհիվ այն հարուստ նյութի, որ կուտակված էր նրա մեջ Հայաստանի և Վրաստանի անցյալի զուգահեռ ուսումնասիրության գծով: Ուստի և հասկանալի է այն գովասանքը, որին արժանացավ այդ աշխատությունը լույս տեսնելուն պես հայ մամուլի կողմից: «Ի. Զավախշվի հիշյալ աշխատությունը,— գրում էր նույն 1905 թ. վրացուկետ Գ. Մուրադյանը,— նվիրված է ցայսօր հազիվ շոշափած հետաքրքրական խնդրին՝ հին Վրաստանի և Հայաստանի պետական կազմակերպության լուսարանության»: «Այժմ միայն, այս աշխատությունը աչքի անցկացնելուց հետո, պարզվում է, թե մենք ինչ աղուտ և հարևանցի հասկացողություն ունենինք մեր անցյալ ընկերավարական կյանքի և կազմի, նրա զարգացման հիմունքի՝ սաղմի և մեր հին հասարակական-պետական կյանքի կազմակերպության մասին»³:

«Այսպես ահա, Երիտասարդ գիտնական Ի. Զավախշվի մեզ տալիս է մի ինքնուրույն ուսումնասիրություն հենց մեր պատմագիտների հազորդած նյութից հանած՝ հին Հայաստանի սոցիալական կազմակերպության մասին, որի նմանը դեռ կատարված չէր և որը բավական տարրերովում է Հ. Չամչյանի և Գ. Ալիշանի նույնանման գործերից: Պ. Զավախշվի աշխատությունը մի նոր գանձ է մեր պատմության և անցյալի ուսումնասիրության համար և կատարված է գիտական բարեխղճությամբ: Ցավում ենք, որ տպագրությունը ազատ չէ սխալներից, թեև դա ինքնըստինքյան կորցնում է իր նշանակությունը կատարած գեղեցիկ աշխատության հանդեպ»⁴:

¹ Հմմտ. Լ. Ս. Մելիքսեթ-Քեկ, VII դարի հայերեն արձանագրությունները Վրաստանում (Ատենի Սիոն), Հայկ. ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1945, № 5, էջ 4:

² Ե. Վ. Մուրադյան, «Արարատ», 1905, սեպտեմբեր, էջ 832—836, հոկտեմբեր, էջ 901—908, դեկտեմբեր, էջ 1110—1114:

³ Նույն տեղում, էջ 834:

⁴ Նույն տեղում, էջ 1114:

Իվ. Զավախիշվիլին մտադրություն է ունեցել, ինչպես նշում է ինքը իր հետագա աշխատություններից մեկում՝ մշակել սույն աշխատության երկրորդ գիրքը¹, սակայն այս մտադրությունն անիրագործելի է մնացել:



1908 թ. Ռուսական Գիտությունների Ակադեմիայի Տեղեկագրում տպագրվեց Իվ. Զավախիշվիլու մենագրությունը՝ «История церковного разрыва между Грузией и Арменией в начале VII века»²։ Աշխատությունը բաղկացած է 8 գլխից։ Առաջին և երկրորդ գլուխներում տրված է հայոց և վրաց եկեղեցական բաժանման պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրների տեսությունը, այն է՝ «Գիրք թղթոց»-ի, Ուխտանեսի «Պատմութիւն բաժանման վրացի Հայոց» և Արսեն Սափարացու «Վրաց և Հայոց բաժանման մասին» գրվածքների քննարկումը։ Սրանցից միմիայն առաջինն է ստույգ և արժանահավատ, մինչդեռ մյուսները տենդենցիոզ են, — եղրակացնում էր երիտասարդ գիտնականը։

«Գիրք թղթոց»-ի տվյալների հիման վրա, հեղինակը կոահում էր, որ «վրացիների և հայերի միջև եկեղեցական բաժանման կարևորագույն պատճառը դավանաբանական տարաձայնություններն էին՝ հիմնված եկեղեցական-կուլտուրական գաղափարների և ձգտումների վրա» (էջ 527)։

Թվում է, որ այստեղ ևս հեղինակը սխալվում է պառակտման պատճառը փնտրելով դավանաբանական տարաձայնությունների մեջ, մինչդեռ Արսեն Սափարացին (IX դ.) ուղղակի մասնանշում է քաղաքական ատառուր, այն է՝ Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև եղած մրցությունը՝ դրացի փոքր ժողովուրդներին իրենց գերիշխանության կամ ազդեցության տակ գցելու համար։

Այստեղ պետք է հիշել, որ սույն պառակտման պատմությանն է նվիրված նաև Վիեննայի Սխիթարյան ներսես Ակինյանի «Երկրորդ կաթողիկոս վրաց» (Վիեննա, 1910) մենագրությունը։

Իվ. Զավախիշվիլին նույն խնդրին անդրադառնում է նաև իր «Վրաց ժողովրդի պատմության» առաջին հատորի երրորդ հրատարակության մեջ, §§ 27—33 (Թբիլիսի, 1928, էջ 347—359, նույն համահում՝ չորրորդ հրատարակությամբ՝ Թբիլիսի, 1951, էջ 378—391)։



1919 թ. լույս է տեսնում Իվ. Զավախիշվիլու «Վրաստանի սահմանները պատմականորեն և ժամանակակից տեսակետով դիտված» գիրքը (վրացերեն), որը բաղկացած է 6 գլխից և որոնցից չորրորդում պատմականորեն տրված է Հայաստանի և Վրաստանի սահմանների տեսությունը (էջ 16—35)։ Այստեղ հայ ժողովրդի պատմության համար նշանակալից են հետևյալ հատվածները. ա. Միջին դարերում «Վրաստանի, իբրև հովանավորող և սպասարկող պատմության, նշանակությունը հայերի համար և սրանց հակումն (դեպի Վրաստան)», Կ. «Հայերի գաղթը» և Գ. «Հայոց գաղթի ուրույն բնույթը XVIII—XIX դարերում»։

1922 թ. Իվ. Զավախիշվիլին հրատարակեց (վրացերեն) դեռևս 1902 թվականին մշակած իր գեկուցումը՝ «Մի էջ գյուղացիական շարժումների պատմությունից հին Հայաստանում» վերնագրով։ Այս աշխատությունը, իսկապես, առաջին փորձն է, ուր, մի կողմից, տրված է XIII դ. հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական»-ի արժեքավորումը, իբրև չգերադանցված պատմական երկասիրության, և, մյուս կողմից, շեշտված է նրա նշանակությունը դասակարգչին պայքարի պատմության համար։ Աշխատության, մանավանդ նրա հայերեն թարգմանության (1937) հրատարակումը, զարկ տվեց հայ պատմաբաններին ուսումնասիրելու միջնադարյան գյուղացիական շարժումները Սյունիքում։

Ոչ մի հայ պատմագրի հանդեպ Իվ. Զավախիշվիլին այնպիսի վստահություն և բացառիկ վերաբերմունք չի ցուցաբերում, ինչպես Ստեփանոս Օրբելյանի նկատմամբ։

Եվ սրա պատճառը ինքը այսպես է բացատրում. «Հայ պատմիչների շարքում Ստ. Օրբելյանն արտասովոր և անուշադր է ներկայացնում։ Նա ուրիշ հայ պատմիչներից ակնհայտ կերպով տարբերվում է՝ ինչպես պատմական նյութերի ընտրությամբ, նույնպես և ավանդելու եղանակով։ Նրանցից և ոչ մեկը՝ մեկ հարյուրերորդական մասն անդամ չունի այն տեղեկություններից, ինչ որ Ստ. Օրբելյանը Հայաստանի ներքին նիստուկացի և կազմի ուսումնասիրության

¹ Թբիլիսիի համալսարանի Տեղեկագիր, II, էջ 248։

² «Известия Академии наук», 1908, էջեր 433—446, 511—536։

Համար իր հետազոտության մեջ հավաքեց: Ստ. Օրբելյանը ներկայացուցիչն էր Վրաստանի պատմության հայտնի Օրբելների տոհմի այն ճյուղի, որը Գիորգի III-ի կողմից արտոյի ենթարկվելուց հետո՝ Հայաստանում դատվապատան և հայացավ, և սա, Ստ. Օրբելյանը, XIII դարի վերջում Սյունյաց եպիսկոպոս եղած ժամանակ՝ յուր հոտի և թեմի պատմության նկարագրության ձեռնամուխ եղավ: Հայ պատմական աղբյուրների տեսությունը շուտով նրան համոզեցրեց, որ այնտեղ Սյունիքի և յուր հոտի վերաբերյալ շատ քիչ տեղեկություններ կան՝ քանի որ նրա ցանկությունն էր հորինել միմիայն այս՝ իր իսկ թեմի պատմությունը, նրան պատմագրական աղբյուրների բացակայության պատճառով մնում էր հրաժարվել մտադրված գործի իրականացումից և այլ տեսակի աղբյուրներ որոնել: Ստ. Օրբելյանը բարեբախտաբար հենց այս երկրորդ ուղին է ընտրում: Նյութերի որոնումների ժամանակ նա հանգել է բավականին ուրույն և ուշագրավ մտքի՝ պատմական երևույթների ընթացքը վերականգնելու համար օգտվել եկեղեցիների ու տաճարների պատերի վրա մնացած վավերագրերից: Բայց ամենից շատ մեղ համար ուշագրավ և թանկարժեքն այն է, որ Ստ. Օրբելյանն ըստ այս արձանագրության՝ հրովարտականների (սիգելների) չհորինեց միմիայն պատմական հյուսվածք, այլ յուր թեմի թեմական կատարյալ հնարավորությունն ապեց իր իսկ ձեռքով վերականգնած պատկերի իրողությունը ճշտել: Իր խոսքերի ճշմարտությունը հաստատելու նպատակով նա շատ տեղ նույնիսկ կցեց իր աղբյուրների, արձանագրությունների կամ վավերագրերի իսկական քննարկները: Իհարկե, Ստ. Օրբելյանը մտցրած չունի բոլոր այն արձանագրություններն ու վավերագրերը, ինչ որ նա տեսել ու կարդացել է: Մի քանիսի վրա նա ուշադրություն չի դարձրել, քանի որ (նրանց մեջ) յուր պատմության համար պիտանի տեղեկություններ չի գտել, իսկ մի քանիսն այնպես է եղել եղծված, որ արդեն դժվար է դարձել վերծանելու: Սակայն, այն էլ, ինչ որ Ստ. Օրբելյանն արձանագրությունների կամ հրովարտականների (սիգելների) բնույթով մտցրեց իր հետազոտության մեջ, այնքան ուշագրավ է և նշանակալից, որ նրա ծառայությունը Հայաստանի պատմության հանդեպ հավիտյան պիտի անմոռանալի մնա, մանավանդ, որ այն ժամանակվա հրովարտականներից (սիգելներից) և ոչ մեկը մեզ չի հասել և միակ աղբյուրն այն ժամանակվա հայկական դիվանագիտության ուսումնասիրության համար Ստ. Օրբելյանի երկն է: Նրա տեղեկությունները թանկարժեք են առանձնապես Հայաստանի հասարակական ու ներքին նիստուկացը վերականգնելու համար:

Ըստ Իվ. Զավախիշվիլու հետազոտության, գյուղացիական ապստամբությունները Սյունիքում, հատկապես Տաթևի եպիսկոպոսանիստ վանքի կալվածատիրական-նորտատիրական տեղեկեցների դեմ, տեղի են ունեցել 915—930 թվականներին:

Իվ. Զավախիշվիլու աշխատությունը (մշակված դեռևս 1902 թ. և տպված 1922 թ.), իրոր, առաջին հիմքեր է, որ շեշտված է, թե ինչպես աղասալին բաժանումից զատ Հայաստանում սոցիալական պայքար էլ է տեղի ունեցել, այնքան հզոր, որ երբեմն նույնիսկ ճակատագրական է դարձել: Ընդամենը ասիրող և ստորագրվող դասերի միջև ծագած կատաղի պայքարը հակադիր խմբակներին և շարքերին երբեմն ծայրահեղության էլ է հասցրել և պայքարը կատաստրոֆալով վերացել: Ապա, նշելով, որ ժՀայաստանի սոցիալական պատմության ամենից պակաս կամ, ավելի ճիշտն ասած, իսկի շուտումնասիրված հարցերից մեկը պիտի համարվի գյուղացիների իրավական-տնտեսական կացությունը և տերերի ու ճորտերի միջև եղած փոխհարաբերությունները, հեղինակը հայտարարում է, որ «մենագրության նպատակն է հենց այսպակասի լրացումն»:



Հավասարապես հայ ընթերցողն է վիճակի է դատելու Իվ. Զավախիշվիլու մյուս աշխատության մասին՝ «Անհամաձայնությունն ու պայքարը եկեղեցական հասույթների առթիվ Անիի վրաց և քաղկեդոնիկ հայ հոտի ու հոգևորականության միջև 1218 թ.» թեմայով, որը երրորդ դուրսն է կազմում նրա «Սոցիալական պայքարի պատմությունը Վրաստանում IX—XIII դարերում» գրքույկի՝ տպված Թբիլիսիում (վրացերեն) 1934 թ. և արտատպված նրա «Վրաց ժողովրդի պատմության» V գրքում, որը լույս տեսավ Թբիլիսիում 1953 թվականին (էջ 138—145):

Այս ուսումնասիրությունը հիմնված է 1910 թ. Անիում Ն. Մառի կողմից հայտնաբերված վրաց նպիհան կաթողիկոսի 1218 թ. հազվագյուտ վրացերեն արձանագրության վրա, որը դուգադիպում է Ապաղամբենց Գրիգոր արքեպիսկոպոսի 1217 թ. հայերեն արձանագրությանը: Զույգ արձանագրությունները՝ մեկը մյուսին լրացնելով՝ հազվագյուտ աղբյուրներ են

1217—1218 թթ. միջոցին՝ Անիում, մի կողմից, քաղկեդոնիկ ու հակաքաղկեդոնիկ հոգևորականությանը և, մյուս կողմից, համապատասխան հոսանքի միջև ծագած վեճերի շուրջը եկեղեցական հասցիների մուծման (նվազեցման) համար¹:



1935 թ. Թրիլիսիում վրացերեն լեզվով լույս է տեսնում Իվ. Զավախիշվիլու «Հին հայոց պատմական գրականությունը՝ աշխատություն I հատորը: Այս գրքում դիտված է V—VI դդ. հայ մատենագրությունը երկու գրվագով. ա. «վկայաբանական գրականությունը» (էջ 4—70) և բ. «վարդաբանական գրականությունը» (էջ 71—195)²:

Առաջին գրվագում քննված են 6 վկայաբանություններ. 1. Սուքիասյանց, 2. Ոսկյանց, 3. Արիստակեսի, Վրթանիսի, Հուսկան, Գրիգորիսի և Դանիելի, 4. Դավթի և Տիրիճանի, 5. Գրիգոր Պարսկի և 6. Եզիդ-Բողիդի: Սրանցից վերջինը (վեցերորդը), Իվ. Զավախիշվիլու ասելով «բովանդակալից պատմական հուշարձան է, վեցերորդ դարու կեսի Սասանյան Պարսկաստանի և Հայաստանի կացության վերաբերյալ թանկարժեք տվյալներ պարունակող» (էջ 70), երրորդը՝ «հայոց եկեղեցական ծիսակատարությունների նկատմամբ ժամանակի պահպանողական մտայնության արտահայտիչը» (էջ 32), հինգերորդը՝ «պատմական եղելության միմիայն համառոտ պատմը» (էջ 50), իսկ մնացած երեքը, այն է՝ առաջինը, երկրորդը և չորրորդը՝ «պատմական արժեքից միտնգամայն զուրկ» գրվածքներ են (էջ 38):

Երկրորդ գրվագը նվիրված է Ագաթանգեղոսի և Կորյունի պատմությունների քննությանը: Ագաթանգեղոսի պատմության նկատմամբ Իվ. Զավախիշվիլին արժարժում է այն դրույթը, որ այդ հուշարձանը հասել է մեզ ոչ թե նախնական, այլ VIII դարի առաջին կեսի խմբագրությամբ, մինչդեռ նույն հուշարձանի այսպես կոչված արաբական վերսիսն, որի նախատիպը Ն. Մառի ենթադրությամբ հունարենը պիտի լինի, ասել է քաղկեդոնական ոգով վերամշակված ձևով, առկա է համեմատաբար ավելի հին խմբագրությամբ (հավանական է՝ VII դարի), բայց մեր ձեռքի տակ եղած հայկական «ազգայինը»:

Gerard Garitte-ի հայտնադրումը, որի արտահայտիչն է Հռոմում 1946 թվականին հրատարակված մեծածավալ աշխատությունը «Documents pour l'étude du livre d'Agathange. Citta del Vaticano Bibliotheca [Studie Testi 127]», XVII+447 էջ, հաստատեց հիշյալ ենթադրության ճշմարտությունը:

Իվ. Զավախիշվիլին անդրադարձել է նաև «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպին: 1939 թ. Իվ. Զավախիշվիլին հրավիրված էր մասնակցելու «Սասունցի Դավիթ» հորեկության հանդեսին և ընտրված էր հորեկյան անցկացնող ռեսպուբլիկական կոմիտեի կազմի մեջ, սակայն հիվանդության պատճառով չկարողացավ գալ Երևան:

Իր վերաբերմունքը դեպի հայ ժողովրդական վեպը Իվ. Զավախիշվիլին արտահայտեց զույգ հոդվածներում, որոնցից մեկն է «Эпос «Давид Сасунский» близок и родственен всем народам СССР» (Երևան, «Коммунист», 1938, 14 XII, № 255), իսկ մյուսը՝ «Отражение истории в народном эпосе и народного эпоса в истории» (նույն տեղում, 1939, 16 IX, № 214), նույնը հայերեն՝ «Պատմության արտացոլումը ժողովրդական էպոսի մեջ և ժողովրդական էպոսին պատմության մեջ» («Գրական թերթ», 1939, 15 IX, № 25):

Առաջինում Իվ. Զավախիշվիլին գրում էր.

«Սասունցի Դավիթ» էպոսը՝ հայկական ժողովրդական ստեղծագործության զարդը, դրա հետ միասին իր կերտվածքով և ոգով մտնիկ ու հարազատ է մյուս բոլոր ժողովուրդներին: Օտարերկրյա նվաճողների և ճնշողների դեմ հայ ժողովրդի մղած բազմադարյան հերոսական պայքարը՝ էպիկական ոճով շարադրված և արտահայտված պոեմում, չի կարող չհիացնել բո-

¹ 1936 (1937) թ. Երևանում լույս է տեսնում, մեր թարգմանությամբ և մեր առաջաբանով ու ծանոթագրություններով հանդերձ, Իվ. Զավախիշվիլու զույգ հոդվածների ժողովածուն ընդհանուր վերնագրով «Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմությունից IX դ. և XIII դ. սկզբներին»:

Գրքույկը պարունակում է վերևում արդեն քննված զույգ աշխատությունները. ա. «Մի էջ գյուղացիական շարժման պատմությունից հին Հայաստանում» և բ. «Անհամաձայնությունն ու պայքարը եկեղեցական հասցիների առթիվ Անիի վրաց և քաղկեդոնիկ հայ հոսի և հոգևորականության միջև 1218 թ.»:

² Հմմտ. P. Peeters-ի գրախոսականը այս գրքի մասին՝ «Analecta Bollandiana», 4. 57. Bruxellis, 1936, էջ 397—401:

լոր նրանց, ում թանկ է աշխատավոր ժողովրդի ազատությունը: Ուրիշ ժողովուրդների էպիկական ստեղծագործությանը հարազատ մոտիվները, որոնք մեծ քանակությամբ ցրված են Դավթի և Մհերի պոեմում, ակամայից նրան են գամում նաև մյուս ազգերի ֆոլկլորագետների ուշադրությունը: Դավթի և Մհերի էպոսը, բնականաբար, պետք է դառնա համաշխարհային գրականության սեփականությունը: Ինչպես բովանդակության, այնպես էլ առանձին էպիկոսների արտահայտման շատ վարիանտներով մեզ հասած այդ էպոսը հետադուրսդներին տալիս է գիտական պրպտումների համար հարուստ և շատ գալթակղիչ նյութ: Դավթի և Մհերի պոեմի արժանիքի բարձր նշանակությունը, գրավիչ գաղափարն ու օտարերկրյա ճնշողների դեմ ժողովրդի ազատագրության համար մղված պայքարի պատկերը իրավունք են տալիս հուսալու, որ այն այժմվանից կդառնա լարված, գիտական խորը հետազոտությունների թեմա բոլոր երկրներում և առաջին հերթին Սովետական Հայաստանում: Այդ հետազոտությունների բեղմնավետ արդյունքները բոլորին հնարավորություն կտան բոլոր մանրամասնություններով հասկանալու հայ ժողովրդի բազմադարյան այդ ստեղծագործության բովանդակությունը և լավ զնահատելու նրա բանաստեղծական արժանիքի բոլոր հրաշալիքները:

Հորեյյանական առաջիկա հանդիսավորությունները, իհարկե, կհանդիսանան դրա հզոր խթանը»:

Իվ. Ջավախիշվիլու երկրորդ ելույթը «Սասունցի Դավթի» հորեյյանի կապակցությամբ նշանակալից է նրանով, որ այստեղ մեծ գիտականը հանդես է դալիս Մովսես Խորենացու պաշտպանության փորձով, թեև հայոց պատմության «նախահոր» ժամանակի որոշման կետում, դժբախտաբար, հարում է ակադ. Հ. Մանանդյանի տեսակետին (ի դեպ, նշենք, որ Մանանդյանին ձայնակցում էին, թեև նրանից անկախ, նաև այլ մոտեցումով, Հ. Մարկիվարտ և Ն. Ակիբյանը) ¹:

«Այժմ, երբ եղբայրական հայ ժողովուրդը ստնում է իր բազմադարյան մեծ կյոսի» «Սասունցի Դավթի» նշանավոր հորեյյանը, ես,— գրում էր Իվ. Ջավախիշվիլին 1939 թ.— որպես պատմաբան, ակամա հիշում եմ այն դրույթները, որոնք 36 տարի առաջ ասել եմ, որպես պաշտոնական օպոնենտներից մեկը, պրոֆ. Գ. Խալաթյանի դոկտորական դիսերտացիայի՝ «Հայ Արշակունիները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ» դիսպուտի ժամանակ»:

«Համաձայնվելով Մովսես Խորենացուն տրադիցիոն կերպով V դարին վերագրելու դեմ արած նրա եզրակացություններին... Խալաթյանի մի քանի քննադատական դիտողություններին՝ շարադրության ճշգրտության մասին, ես միանգամայն սխալ էի համարում նրա առաջադրած դրույթը, որ իբր թե քանի որ Խորենացու տեղեկությունների ճշգրտությունը նա հերքել է, ապա Խորենացու աշխատությունը թմուում է միանգամայն կարեւոր, կարելի է ասել նույնիսկ առաջնակարգ նշանակություն ունեցող գործ, բայց ոչ որպես պատմական երկ, այլ որպես զբաղան կոթող» (էջ 377): Հենց այդ ժամանակ էլ վերահիշյալ դրույթի հեղինակին ես մատնանշեցի, որ միանգամայն սխալ է այդ գնահատականը, և հիմա էլ հարմար եմ համարում համառոտակի հայտարարել, որ Մովսես Խորենացու նշանակությունը հին հայկական պատմագրության համար չի կարող չեղյալ համարվել... Չէ որ առաջինը նա է փորձ արել գրել Հայաստանի սկզբնական պատմությունը: Կարող են նույնիսկ ժամանակակից պատմաբանները երաշխավորել ու հավակնել, թե իրենց շարադրումները այդքան հեռավոր դարաշրջանների դեպքերի մասին՝ լիովին ճշգրիտ են...»:

«Մ. Խորենացու նշանակությունը հայ պատմագրության համար մեծ էր և հնություն մեջ, անխախտ կմնա նա և ընդմիշտ, եթե միայն պատմական հարցերի ուսումնասիրությանը մոտենան պատմական հեռանկարը լիովին հարդելով: Մ. Խորենացին հետաքրքրական երևույթ է ոչ միայն Հայաստանի համար, նա մեկն է միջնադարյան փոքրաթիվ պատմաբաններից, որի ուժերը ներում էր ե՝ թեորեւիկ մտածողություն անել իմիջիայոց և՛ պատմության մեթոդոլոգիական հարցերը դնել: Իհարկե նա էլ գտնվում էր այդ ժամանակ իշխող աստվածաշնչային լիսեմատիկայի կապանքներում»:

«Այդ տեսակետից նա հին հայկական պատմական դրականության մեջ մի տեսակ պիոներ է: Բայց դրա հետ միասին նա, և ոչ մի այլ որ, առաջադրել է հին հայկական պատմագրության մեջ երկու հիմնական թիղ. 1. պատումը չի կարող ճանաչվել որպես իսկական պատմություն՝ առանց ժամանակագրական թվագրություն, 2. ճշգրիտ է միայն այն պատմական

¹ Հմմտ. մեր՝ «Академик Я. А. Манандян (1873—1952). «Мимомхилвелл», III, 1953, էջ 344—345:

պատմը, որ պարունակում է գործող անձանց, գործողություն վայրի ցուցում, որի մեջ նկատելի է դեպքերի զարգացման հաջորդականությունը: Այլ խոսքով՝ ճշգրիտ պատմության համար, Մ. Խորենացու կարծիքով, ամենից առաջ անհրաժեշտ էր ժամանակագրական և տեղագրական ֆիքսացիան, շարադրության ունակ հազեցվածությունը և պրագմատիզմը»:

«Արժե» խոսել, թե ինչքան մեծ պետք է լիներ այս գրույթների նշանակությունը. միջնադարյան պատմագրության համար: Վստահությամբ կարելի է ասել, որ պատմական դեպքերի մասին եղած ժամանակագրական ու փաստական տվյալների այն առատությունը, որով այնքան հարուստ ու արժեքով են IX դարից հետո եղած հայկական պատմական կոթողները, մենք պարտական ենք Մ. Խորենացու աշխատության և մեթոդոլոգիական գրույթների ազդեցությանը»:

«Սիրելի պետք է լինի նա մեզ մանավանդ տվյալ մոմենտում նաև շնորհիվ հին հայկական դրականության մեջ կիրառած նրա երրորդ մեթոդի— Չէ՞ որ հատկապես Մ. Խորենացու աշխատության մեջ առաջին անգամ իր արտացոլումը գտավ հայ ժողովրդական վեպը հալոյի պատմագրության մեջ. առաջինը նա օրինակ տվեց, որ հնարավոր է օգտագործել այս տիպի աղբյուրը նաև պատմության համար: Նովատորական և միանգամայն նշանակալի մի քայլ: Եթե այս տեսակետից հետագա հայ պատմիչներն էլ իրենց բարձրության և իրենց տրբված օրինակի վրա լինեին՝ գուցե մենք արդեն ունենայինք Սասունցի Դավթի վիպը և հին հայկական գրառումով, և այդ ժամանակ գիտությունը կունենար մի առաջնակարգ աղբյուր: Եթե դա տեղի չունեցավ, ապա համենայն դեպս ես կարծում եմ, որ այժմ... արդարացի կլինեին հիշատակել և այն մեծ երախտիրը, որ ունի Մ. Խորենացին հայ պատմագրության հանդեպ, որպես հայ ժողովրդական վեպի արտացոլումը հայոց պատմության մեջ առաջին անգամ տված մի նովատոր»:

Ահա այսպես էր գնահատում Իվ. Զավախիշվիլին Մ. Խորենացու երախտիրը հայ պատմագրության առաջ:



Իվ. Զավախիշվիլին հետաքրքրվում էր Հայաստանի և հայ ժողովրդի անցյալով՝ քաղաքական և եկեղեցական պատմության, իրավունքի պատմության, սոցիալական շարժումների պատմության և աղբյուրագիտության դժոժ, այլև՝ Հայաստանի պատմական աշխարհագրության խնդիրներով, որով XIX—XX դդ. բնթացքում զբաղվում էին Դ. Ինճիճյանը, Դ. Ալիշանը, Հ. Մարկվարտը, Հ. Մանանդյանը և ուրիշներ:

Այս բնագավառի աշխատություններից մեկը, որը վերաբերում է Հայաստանի և Վրաստանի սահմանների պատմական տեսությանը, մենք վերևում արդեն նշեցինք:

Սակայն այս աշխատությունից դատ՝ Իվ. Զավախիշվիլին թողել է նաև մի շարք էություններ, որոնցից մեկը վերաբերում է «Հիսթիսային կողմանց» ֆորմուլայի ճշման, որը գրքված է մեր «Վարդապետը հայոց հիսթիսային կողմանց» (Թբ., 1928) աշխատության առթիվ, իբրև երկրորդ հավելված մեծածավալ գրքի. «Վրաց ժողովրդի պատմության ներածություն. I Վրաստանի, Կովկասի և Առաջավոր Ասիայի պատմական-էթնոլոգիկ պրոբլեմները» (վրացերեն, Թբիլիսի, 1950, էջ 253—257): Այլևայլ մանրությունների շուրջը Հայաստանի պատմական աշխարհագրության բնագավառից Իվ. Զավախիշվիլին խոսում է նույն գրքում մի այլ առիթով ևս (էջ 267—269):

Ի վերջո, նշենք և այն, որ Իվ. Զավախիշվիլին, իբրև հիմնականում միջնադարի և միջնադարյան պատմության հետազոտող, սիրահար էր միջնադարյան պատմագիրների, իսկ հայ պատմագիրներից նա առաջնակարգ տեղ էր հատկացնում Մ. Խորենացուն, Ստ. Օրբելյանին և Մ. Մեծոփեցուն և Ա. Դավթիսեցուն:



Այսպիսին է, համառոտ դիտված, ակադեմիկոս Իվ. Զավախիշվիլու երախտիքը հայագիտության հանդեպ, մասնավորապես, վրացական հայագիտության զարգացման բնագավառում:

Ակներև է, որ հանգուցյալի հսկայական գրական-գիտական ժառանգության մեջ պատվավոր տեղ են գրավում, իմիջիպալոց, մի շարք դուռ հայագիտական գործերը, որոնցով նա արժանի է դասվելու վաստակավոր հայագետների շարքը և իբրև ականավոր գիմր հիշվելու հայագիտության պատմության մեջ:

АКАДЕМИК ИВ. ДЖАВАХИШВИЛИ И АРМЕНОВЕДЕНИЕ*(К 20-летию со дня смерти)***Л. М. МЕЛИКСЕТ-БЕК***(Тбилиси)***(Р е з ю м е)**

В статье автор задался целью ознакомить читателей с научным наследием академика И. Джавахишвили, подчеркивая его заслуги в области арменоведения.

И. Джавахишвили родился в 1876 г., в г. Тбилиси. По окончании Петербургского университета (1899 г.) он остается на работе в университете при кафедре армяно-грузинской филологии, читая лекции не только по истории Грузии, но и по истории Армении.

Автор статьи подчеркивает значение трудов академика Джавахишвили в развитии грузинского арменоведения. В связи с этим в статье освещаются такие труды Джавахишвили, как «Государственный строй древней Грузии и древней Армении», «История церковного разрыва между Грузией и Арменией в начале VII века», «Страница из истории крестьянского движения в древней Армении», «Древнеармянская историческая литература» и другие.

И. Джавахишвили состоял членом первых научных советов Матенадарана, институтов истории, языка и литературы Армении.